

**ԳԱԶԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՎՈՂ
ՆԻՄՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՆԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

բնական գազ կամ գազ	այրվող բնական գազ՝ բաղակազած է մեթանից, էթանից, պրոպանից և բութանից, երբեմն պարունակում է պենտանի, հեքսանի դյուրաեռ հեղուկ ածխաջրածինների խառնուրդներ և այլն, պարունակում է նաև ածխաթթու գազ, ազոտ, ծծմբաջրածին և իներտ գազեր
սեղմված բնական գազ	բարձր ճնշման տակ գտնվող բնական գազ, որը կիրառվում է հիմնականում որպես շարժիչային վառելիք
հեղուկացված ածխաջրածնային գազ	վառելիքային ածխաջրածնային գազ կոմունալ կենցաղային օգտագործման համար, որը հանդիսանում է պրոպանի և բութանի խառնուրդ
օդորանյւր	(լատ. odor - հոտ), նյութ, որը ավելացվում է գազի մեջ նրան բնորոշ, գլխավորապես զգուշացնող հոտ փախու նպատակով:
բնական գազի վիճակի – բնորոշող պարամետրեր	ճնշում (Պա, մթն, բար), ջերմաստիճան (⁰ C, Կ), ծավալ (մ ³ , նմ ³), ջերմարարություն (կկալ/մ ³ , կՋ/մ ³ և այլն)...
ջերմարարություն	միավոր վառելիքի այրման արդյունքում սրացված ջերմության քանակություն
մարակարար	բնական գազի ներկրման կամ փոխադրման կամ բաշխման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ
սպառող (բաժանորդ)	գազատար ցանցին նորմադիվ ակտերով սահմանված կարգով և գործող գազատարին տեխնիկական պայմաններին համապատասխանող միացում ունեցող, մարակարարի հետ բնական գազի մարակարարման (առք ու վաճառքի) պայմանագիր կնքած իրավաբանական կամ ֆիզիկական անձ
գազատարանի համակարգ	գազի առաքման կետից հետո տեղակայված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող կամ նրա տնօրինության կամ օգտագործման ներքո գտնվող գազատար խողովակազները, գազակարգավորիչ կետերը, գազի տեղակայանքները և սարքավորումները
գազատարանի ներդնային համակարգ կամ ներդնային համակարգ	բազմարևակարան շենքերի բնակարաններում, առանձնատներում և քաղաքացիների սեփականությունը հանդիսացող կամ նրանց տնօրինության կամ օգտագործման ներքո գտնվող այլ տարածքներում՝ գազի սահմանագազման կետից հետո տեղակայված խողովակազները, տնային գազակարգավորիչ սարքերը,

	փականները և կենցաղային նպատակներով օգտագործվող գազասարքավորումները
ԷՊԿ	Էլեկտրապաշտպանիչ կայան, որը նախատեսված է խողովակների և գրունարի միջև գոյություն ունեցող պոտենցիալների փոխանցման հետևանքով առաջացող էլեկտրաքիմիական կոռոզիայից խողովակների պաշտպանության համար
գազաբաշխիչ ցանց	արտաքին գազատարերի համակարգերի և դրանց վրա ինժեներական կառուցվածքների ու տեխնիկական կայանքների համակարգ, սկզբնաղբյուրից մինչև ներանցումը սպառողներին
գազաօգտագործող սարքավորում	գազը որպես վառելիք օգտագործող սարքավորում (սալիկ, ջրաբաբացուցիչ, կաթսա, ջեռուցիչ և այլն)
գազային սարքավորում	որպես գազատարերի բաղկացուցիչ տարրեր օգտագործվող, լրիվ գործարանային պատրաստվածության տեխնիկական արտադրանք (կոմպենսատոր, կոնդենսատրահավաքիչ, խողովակաշարային փակիչ արմատոր և այլն)
գազատարի պահպանման գույրի	հատուկ պայմաններով օգտագործվող տարածք՝ սահմանված գազատարի ուղեգծի երկայնքով և գազաբաշխիչ ցանցի այլ օբյեկտների շուրջ, դրանց շահագործման նորմալ պայմանների ապահովման և վնասվելու հնարավորության բացառման նպատակով
հաշվարկային ժամանակաշրջան	սպառողին (բաժանորդին) մատակարարված գազի քանակության հաշվառման՝ գազամատակարարման պայմանագրով ամրագրված ժամանակահատված
տեխնիկական պայմաններ	գազի տնտեսության տեխնիկական համակարգի անխափան և անվտանգ շահագործումն ապահովող նարմատիվ ակտերով ու ղեկավարող փաստաթղթերով սահմանված և տեխնիկատնտեսական հիմնավորմամբ նոր սպառողին առաջադրված գազամատակարարման իրականացման պայմաններ և պահանջներ
գազի ժամային ծախս	մեկ ժամում ծախսված բնական գազի քանակությունն է բերված ստանդարտ պայմանների (20 ⁰ C, 101.325 կՊա)
գազի միջին օրական ծախս	գազի քանակություն, որը հավասար է հաշվարկային ժամանակաշրջանում մատակարարված գազի քանակի և տվյալ հաշվարկային ժամանակաշրջանի օրերի թվի հարաբերությանը
սահմանազատման կետ	կետ, որով բաժանվում (միանում) են գազամատակարարող

	ձեռնարկության և սպառողի հաշվեկշիռներում գրավող կամ նրանց կողմից ԿՊՄ-ի կողմից գազահամակարգերը
առաքման կետ	գազի առևտրային հաշվառքի սարքի ելք
առ-տրային հաշվառքի սարք	գազամատակարարման պայմանագրում ամրագրված, սահմանված կարգով սրուգաչափված և վկայագրված գազի ծախսի հաշվառքի սարք (կենցաղային հաշվիչ, փորժային, ռոտացիոն, ճնշման անկման սկզբունքով աշխատող ծախսաչափ և այլն), որի միջոցով կատարվում է մատակարարված գազի քանակի հաշվարկը
ԳԳՄ	գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղ՝ գազարաշխման համակարգը շահագործող «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ ենթակառուցվածքային ստորաբաժանում
ԱՇԾ	արտադրա-շահագործման ծառայություն՝ ենթաշրջանային (քաղաքային) բաժանումով գազարաշխման համակարգը շահագործող ԳԳՄ ենթակառուցվածքային ստորաբաժանում
գազատարի վերակառուցում	գազատարի նորոգում՝ գազարաշխման համակարգի նախկին ռեժիմով աշխատունակության լրիվ վերականգման կամ առանձին պարամետրերի փոփոխման միջոցով հաշվարկային շահագործման պաշարի ապահովման նպատակով
գազամատակարարման համակարգ	գազատարանատրային, գազարաշխման և ներօբյեկտային (ներքին) գազատարերի, ինժեներական կառույցների (ԳԲԿ-ներ, ԷՊԿ-ներ, ԳԿԿ-ներ, ցանցային փականներ, օժանդակ հարմարություններ) և գազասպառիչ սարքավորումների համակարգ
գազատար	ցածր, միջին և բարձր ճնշման գազը դեպի սպառողները տեղափոխող խողովակաշար
գազատարերի դասակարգումը ըստ ճնշումների	բարձր I կարգի – բարձր 0.6-ից մինչև 1.2 ՄՊա ներառյալ բարձր II կարգի – բարձր 0.3-ից մինչև 0.6 ՄՊա ներառյալ միջին – բարձր 0.005-ից մինչև 0.3 ՄՊա ներառյալ ցածր – մինչև 0.005 ՄՊա ներառյալ
գազատարանատրային համակարգ	մայրուղային բարձր ճնշման գազատարերի և ինժեներական կառույցների (Արոլյանի ԳՍՊԿ, ԳԲԿ, ԷՊԿ, հաշվառման հանգույցներ և այլն) համակարգ
ԳՍՊԿ	գազի ստորգերնյա պահեստ կայան
գազի բաշխման ցանց	բաշխիչ բարձր, միջին և ցածր ճնշման գազամուղների, գազակարգավորիչ կետերի և տեղակայանքների, դրանց

	հուսալի և անվտանգ շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական համակարգ, որի միջոցով իրականացվում է գազի առաքումն աշխարհագրական որոշակի փարսածքում տեղաբաշխված սպառողներին
ԳԿԿ	գազի կարգավորիչ կեւր՝ շինություններում տեղադրված տեղակայանքների համակարգ, որը նախատեսված է գազարաշխիչ ցանցերում գազի ճնշման իջեցման և կարգավորման համար
ԳԿՏ	գազի կարգավորիչ տեղակայանք՝ նախատեսված է գազարաշխիչ ցանցերում գազի ճնշման իջեցման և կարգավորման համար
ՊԳԳԿ	պահարանային գազի կարգավորիչ կեւր՝ նախատեսված է գազարաշխիչ ցանցերում գազի ճնշման իջեցման և կարգավորման համար
հաշվառման հանգույց	բնական գազի հաշվառման տեղակայանք, որը կահավորված է ծախսարափով, գրիչով և միացնող հանգույցներով
չափագիտություն	գիտություն չափումների, նրանց միասնականության ապահովման, պահանջվող ճշգրտությանը հասնելու եղանակների և միջոցների մասին
չափման միջոցի ցուցմունքը	չափվող մեծության արժեքը, որը ցույց է տալիս չափման միջոցը
չափման ճշտություն	չափման արդյունքի համընկման աստիճանը չափվող մեծության իրական (ճշմարիտ) արժեքին
չափման սխալանք (բացարձակ)	չափվող մեծության ճշմարիտ (իրական) արժեքի և փաստացի չափման արդյունքների փարբերությունը
չափման միջոց	տեխնիկական միջոց, որը նախորոշված է չափումների համար և ունի նորմավորված չափագիտական բնութագրեր
միջատուգաչափման ժամանակամիջոց	ստուգաչափման վկայականում նշված ժամկետն է, որի ընթացքում չափման միջոցը պետք է բավարարի նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին
չափագիտական ծառայություն	կառավարման պետական մարմինների և տնտեսական գործունեության սուբյեկտների ծառայությունների կամ առանձին ենթաբաժինների ցանց, որոնց վրա է դրված չափումների չափագիտական ապահովման պատասխանատվությունը
ստուգաչափական լաբորատորիա	չափագիտական ծառայության մարմին, որն իրականացնում է չափման միջոցների ստուգաչափում համաձայն իրեն տրված իրավունքի

<i>սրուգանշրում</i>	չափման միջոցների պիտանիությունը որոշելու և հաստատելու նպատակով կատարվող գործառնություն
<i>սերտիֆիկացում</i>	արտադրանքի (ապրանքի) ստանդարտին կամ որոշակի պահանջների համապատասխանության երաշխավորման ընթացակարգ